«Արցախ ՀԷԿ»
Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեփակված տարվա

ԵՐԵՎԱՆ
Ապրիլ 2011թ.

Բովանդակություն

	Էջ
Տնօրենների խորհրդի կազմ	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Հաշվապահական հաշվեկշիռ	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Տնօրենների խորհրդի կազմ

Սպարտակ Թնոսյան	ԼՂՀ փոխվարչապետ - Խորհրդի նախագահ
Կառլեն Պետրոսյան	ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարար
Միհրան Գալստյան	«ԱՐՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, ավագ իրավախորհրդատու
Մերուժան Բաբայան	
Վահրամ Բեգլարյան	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, գլխավոր տնօրեն

Ընկերության ղեկավար անձնակազմ

Վահրամ Բեգլարյան	Գլխավոր տնօրեն
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսների և էկոնոմիկայի գծով տնօրեն
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ

Անկախ աուդիտորական եզրակացություն № 14

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կից ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու, համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

8 ապրիլի 2011թ.
ՍՕՍ-Աուդիտ ՍՊԸ

Մանվել Ղազարյան	Գնել Խաչատրյան
Տնօրեն	Աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2010թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

	Ծան.	2010թ. հազար դրամ	2009թ. հազար դրամ
Հասույթ	4	1,614,897	1,073,016
Վաճառքի ինքնարժեք	5	(305,093)	(236,212)
Համախառն շահույթ		**1,309,804**	**836,804**
Վարչական ծախսեր	6	(124,635)	(69,862)
Իրացման ծախսեր		(3,573)	(335)
Այլ գործառնական եկամուտներ		2,076	647
Այլ գործառնական ծախսեր	7	(28,169)	(27,518)
Այլ օգուտ/(վնաս)	8	18,964	(61,555)
Շահույթ մինչև հարկումը		**1,174,467**	**678,181**
Շահութահարկի գծով ծախս	10	(58,573)	(38,327)
Տարվա զուտ շահույթ		**1,115,894**	**639,854**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային շահույթ (դրամ)	16.5	**185**	**114**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2011թ. ապրիլի 8-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Վահրամ Բեգլարյան
Գլխավոր տնօրեն

Արայիկ Դավթյան
Գլխավոր հաշվապահ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31.12.2010թ. հազար դրամ	31.12.2009թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	11,633,520	7,859,112
Ոչ նյութական ակտիվներ	12	5,393	6,464
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		83,272	449,748
		11,722,185	**8,315,324**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	24,060	19,128
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	577,423	504,177
Կանխավճարներ գնումների գծով		14,621	3,971
Դրամական միջոցներ	15	548,467	56,327
		1,164,571	**583,603**
		12,886,756	**8,898,927**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	16.1	7,362,074	5,962,074
Էմիսիոն եկամուտ	16.2	158,748	43,104
Պահուստային կապիտալ	16.3	43,645	-
Կուտակված շահույթ		1,153,528	656,170
		8,717,995	**6,661,348**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	2,527,849	1,482,793
		2,527,849	**1,482,793**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	1,417,858	709,415
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	193,228	9,796
Շահութահարկի գծով պարտավորություն	10	29,826	35,575
		1,640,912	**754,786**
		12,886,756	**8,898,927**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2010թ.	2009թ.
	հազար դրամ	հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված	2,094,029	1,108,143
Գործառնական այլ գործունեությունից ստացված	2,222	936
Նյութերի, ծառայությունների ձեռքբերման դիմաց վճարումներ	(185,665)	(184,881)
Վճարումներ աշխատակիցներին	(135,736)	(95,840)
Շահութահարկի վճարում	(64,322)	(9,412)
Վճարումներ այլ հարկերի գծով	(91,382)	(23,602)
Վճարումներ սոցիալական ապահովության գծով	(22,728)	(15,955)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(11,090)	(4,720)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**1,585,328**	**774,669**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերման գծով վճարումներ	(3,345,836)	(2,562,336)
Բանկային ավանդներ	(200,514)	-
Բանկային ավանդների մարում	200,514	-
Ստացված տոկոսներ	1,614	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(3,344,222)**	**(2,562,336)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր	1,536,960	887,074
Վարկերի և փոխառությունների ստացում	2,848,391	2,759,674
Վարկերի և փոխառությունների մարում	(988,227)	(1,552,622)
Վճարված տոկոսներ	(545,221)	(183,616)
Շահաբաժինների վճարում	(595,101)	(69,730)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**2,256,802**	**1,840,780**
Դրամական միջոցների զուտ հոսքեր	**497,908**	**53,113**
Փոխարժեքային տարբերություններ	(5,768)	(4,708)
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	56,327	7,922
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	**548,467**	**56,327**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2010թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

	Ծան.	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Վերագնահատումից արժեքի աճ	Կուտակված շահույթ	Ընդամենը
		հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2009թ.		**5,100,000**	**-**	**-**	**13,087**	**72,960**	**5,186,047**
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր		862,074	43,104	-	-	-	905,178
Շահաբաժիններ		-	-	-	-	(69,730)	(69,730)
Տարվա շահույթ		-	-	-	-	639,853	639,853
Ներքին շարժեր		-	-	-	(13,087)	13,087	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2009թ.		**5,962,074**	**43,104**	**-**	**-**	**656,170**	**6,661,348**
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր	16.1, 16.2	1,400,000	136,960	-	-	-	1,536,960
Շահաբաժիններ	16.4	-	-	-	-	(596,207)	(596,207)
Տարվա շահույթ		-	-	-	-	1,115,894	1,115,894
Ներքին շարժեր	16.2, 16.3	-	(21,316)	43,645	-	(22,329)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2010թ.		**7,362,074**	**158,748**	**43,645**	**-**	**1,153,528**	**8,717,995**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2010թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) կառավարության 13.05.2008թ. N 360 որոշմամբ՝ «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: Ընկերության կանոնադրությունը հաստատված է ԼՂՀ արդարադատության նախարարության պետռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից 2008թ. հունիսի 9-ին, գրանցման թիվ 44313011407, վկայական 02Ա 002083:

Ընկերության ամենախոշոր բաժնետերն է հանդիսանում ԼՂՀ կառավարությունը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ 69.3%:

Ընկերության գործունեության ոլորտն է էլեկտրաէներգիայի արտադրությունը և իրացումը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) պահանջներին համապատասխան:

2.2 Ֆունկցոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

2.3 Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՀՀՀՀՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են շարունակաբար: Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են փոփոխման և հետագա ժամանակաշրջաններում:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Ընկերության համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված հաշվարկային փոխարժեքը: Հաշվետու ամսաթվին արտարժույթով ներկայացված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆուկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթի տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- վարկեր և փոխառություններ,
- դրամական միջոցներ և համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, վարկերը և փոխառությունները չեն դասակարգվում որպես իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, որոնց փոփոխությունը արտացոլվում է ժամանակաշրջանի շահույթում և վնասում:

Դրամական միջոցները կազմված են դրամարկղի և բանկային հաշիվների միջոցներից: Բանկային ցպահանջ օվերդրաֆտները, որոնք կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման համակարգի անբաժանելի մասը, ներառված են որպես դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլելու նպատակով:

3.2.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են հաշվեկշռում այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները: Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

3.2.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը դա այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և հանած արժեզրկման գծով դուրսգրված ցանկացած գումար: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և կիրառվող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամուտների և ծախսերի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով մինչև մարման ժամկետը կամ շուկայի վրա հիմնված հաջորդ վերանայումը դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ զուտ հաշվեկշռային արժեքը:

3.2.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է (դուրս է գրվում հաշվեկշռից) այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը, կամ

բ) Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

3.3 Սեփական կապիտալ

3.3.1 Բաժնետոմսերի թողարկում

Կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի կողմից ձեռք բերված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից:

Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

3.3.2 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

3.3.3 Պահուստային կապիտալ

Ընկերությունը ստեղծում է պահուստային կապիտալ՝ Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

3.3.4 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկում

Ընկերությունը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկում է տարվա զուտ շահույթը կամ վնասը բաժանելով տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը իրենից ներկայացնում է տարեսկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թիվը՝ ճշգրտված այդ ժամանակաշրջանի ընթացքում հետ գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թվով՝ բազմապատկված ժամանակային կշռող գործակցով: Ժամանակային կշռող գործակիցը բաժնետոմսերի շրջանառության մեջ գտնվելու օրերի թիվն է՝ բաժանած հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվի վրա, կշռված միջինի խելամիտ մոտավորեցումը շատ դեպքերում տեղին է:

3.4 Հիմնական միջոցներ

3.4.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և

բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը՝ հանած առևտրային զեղչերը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի ծախսումները, ինչպես նաև արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Ներքին շահույթները և նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների նորմալ մակարդակից բարձր ծախսումները կառուցվող ակտիվի սկզբնական արժեքի մեջ չեն ներառվում: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են ինքնարժեքով:

3.4.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտներն ավելի շատ, քան

ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Մյուս բոլոր դեպքերում ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

3.4.3 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

«Արցախ ՀԷԿ» Փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման ժամանակ (ծնթ. 1.1) «Արցախ ՀԷԿ» Բաց բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտով հանձնված արժեքները վերջինիս մոտ հիմք են հանդիսացել հիմնական միջոցների սկզբնական արժեքների որոշման համար:

3.4.4 Մաշվածություն

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:
Ընկերությունը հիմնական միջոցի միավորի գծով սկզբնապես ճանաչված գումարը բաշխում է ըստ դրա նշանակալի մասերի և այդ յուրաքանչյուր մասի համար մաշվածությունը հաշվարկում է առանձին:
Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- Շենքեր 20-60 տարի
- Կառուցվածքներ 20-60 տարի
- Փոխանցող հարմարանքներ 20-50 տարի
- Մեքենաներ, սարքավորումներ 20-60 տարի
- Տրանսպորտային միջոցներ 5 տարի
- Արտադրատնտեսական գույք 5-20 տարի
- Բազմամյա տնկարկներ 5 տարի
- Այլ հիմնական միջոցներ 1-5 տարի

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները պարբերաբար վերանայվում են, և եթե ակնկալվող գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից, ընթացիկ և հետագա հաշվետու ժամանակաշրջանների մաշվածության հաշվեգրումները ճշտվում են:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

3.5.1 Ոչ նյութական ակտիվների սահմանումը և ճանաչումը

Ոչ նյութական ակտիվը որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որը զուրկ է ֆիզիկական սուբստանցիայից:

Ակտիվը, ոչ նյութական ակտիվների սահմանման համատեքստում, բավարարում է որոշելիության (իդենտիֆիկացման) չափանիշին, երբ այն.

ա) կարող է բաժանվել Ընկերությունից՝ հետագա վաճառքի, փոխանցման, վարձակալության տալու կամ փոխանակելու համար, ինչպես անհատական ձևով,

այնպես էլ համապատասխան պայմանագրի, ակտիվի կամ պարտավորության հետ միասին, կամ

բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավական իրավունքներից, անկախ այն հանգամանքից՝ հանդիսանում են այդ իրավունքները փոխանցվող կամ առանձնացվելի Ընկերությունից կամ այլ իրավունքներից և պարտավորություններից, թե ոչ:

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և

բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.5.2 Ոչ նյութական ակտիվների չափում

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ներստեղծված գուդվիլի և մակնիշների, կաղրերի վերապատրաստման, գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս կատարվելու ժամանակաշրջանում:

3.5.3 Ամորտիզացիա

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով ամորտիզացիայի հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Ընկերության բոլոր ոչ նյութական ակտիվներն ունեն սահմանափակ օգտակար ծառայության ժամկետներ և ամորտիզացվում են գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
Արտոնագրեր, լիցենզիաներ	15 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	10 տարի

3.5.4 Հետազոտություն և մշակում

Հետազոտություն ծախսումները, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու ակնկալիքով, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Մշակման ծախսումները՝ այնքանով, որքանով հետազոտության արդյունքները կիրառվում են նոր կամ էականորեն բարելավված արտադրատեսակների և գործընթացների արտադրությունը (իրականացումը) պլանավորելու և նախագծելու համար, կապիտալացվում են, եթե այդ արտադրատեսակը կամ գործընթացը տեխնիկական և առևտրային տեսանկյունից իրագործելի են, և Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ մշակումն ավարտելու համար: Կապիտալացված ծախսումները ներառում են նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները և արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Մշակման այլ ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս կատարվելու ժամանակաշրջանում: Մշակման կապիտալացված ծախսումները ներկայացված են

սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.6 Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ընկերությունը չունի ֆինանսական վարձակալությամբ ստացված ակտիվներ:

Ֆինասական վարձակալությունից տարբերվող վարձակալությունը համարվում է գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության հաշվապահական հաշվեկշռում:

3.7 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

3.8 Արժեզրկում

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

3.8.1 Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Ընկերության դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես

անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է այդ ակտիվը:

3.8.2 Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքագրելիության պահուստը): Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ ստեղծվում է, երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ ընկերությունը ի վիճակի չի լինի ժամանակին հավաքագրել բոլոր գումարները՝ դեբիտորական պարտքերի առաջացման սկզբնական պայմաններին համապատասխան:

Որպես դեբիտորական պարտքի արժեզրկման հնարավոր հայտանիշներ են ընդունվում դեբիտորի նշանակալի ֆինանսական դժվարությունները, նրա սնանկացման մեծ հավանականությունը, վճարումների էական ուշացումները: Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական պարտքը դուրս է գրվում պահուստի հաշվին:

Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստի ստեղծումը, փոփոխությունները, ինչպես նաև դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.10 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.11 Հասույթ

3.11.1 Ծառայություններ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն.

Էլեկտրաէներգիայի իրացումից հասույթը ճանաչվում է իրացմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով: Այլ ծառայությունների ավարտման աստիճանը գնահատվում է հաշվի առնելով կատարված աշխատանքների ուսումնասիրությունը:

3.11.2 Ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում՝

I. կառավարման այն չափով մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,

II. վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

3.12 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

3.13 Ֆինանսական ծախսեր և եկամուտներ

Ֆինանսական եկամուտը ներառում է բանկային ավանդներից ստացվող տոկոսային եկամուտները: Տոկոսային եկամուտը ճանաչվում է հաշվեգրման պահին՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները: Փոխառության գծով տոկոսները, բացի այն դեպքից, երբ դրանք կապիտալացվում են, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում որպես ծախս՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք հաշվեգրվում են:
Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման և արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ինքնարժեքի մաս:

3.14 Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության ժամկետի ընթացքում:

3.15 Էական սխալների ուղղում

Հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիներին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ սխալները առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որոնք անմիջականորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Նման դեպքերում ուղղման գումարները ուղղակիորեն արտացոլվում են սեփական կապիտալում: Համեմատելի տեղեկտվությունը չի վերաներկայացվում:

4. Հասույթ

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Արտադրված էլեկտրաէներգիայի իրացումից	1,614,897	1,073,016
	1,614,897	**1,073,016**

Էլեկտրաէներգիան իրականացվում է մեկ գնորդի՝ մինչև 2010թ. հունիս ամիսը՝ “ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ” ՓԲԸ-ին, սկսած 2010թ. հունիս ամսից՝ “ԷՅ-Ի-ՋԻ” ՍՊԸ-ին:

5. Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Հիմնական միջոցների մաշվածություն	106,271	93,888
Արտադրական օբյեկտների պահպանման ծախսեր	54,588	34,069
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	97,805	68,505
Սոցիալական ապահովության գծով ծախսեր	14,671	10,276
Վերանորոգման ծախսեր	12,125	3,908
Նյութեր	19,111	11,091
Այլ ծախսեր	522	14,475
	305,093	**236,212**

6. Վարչական ծախսեր

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Աշխատանքի վարձատրության գծով	53,410	33,568
Սոցիալական ապահովության գծով	7,509	5,122
Հիմնական միջոցների մաշվածություն	7,683	3,708
Ամորտիզացիա	793	631
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	12,740	8,457
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,612	3,480
Հիմնական միջոցների պահպանման ծախսեր	1,408	2,750
Հեռահաղորդակցության ծախսեր	3,223	2,458
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	18,329	4,665
Վարձակալական ծախսեր	5,901	-
Բանկային ծախսեր	2,724	2,468
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	5,500	1,365
Այլ ծախսեր	1,803	1,190
	124,635	**69,862**

7. Այլ գործառնական ծախսեր

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Հետազոտության և մշակման ծախսեր	8,435	1,693
Բաժնետոմսերին առնչվող ծախսեր	7,847	21,316
Արտարժույթի փոխանակման ծախսեր	5,743	-
Վաճառված պաշարների ինքնարժեք	1,523	-
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրում	1,124	-
Տույժեր, տուգանքներ	4	2,977
Այլ ծախսեր	3,493	1,532
	28,169	**27,518**

8. Այլ օգուտ/(վնաս)

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	52,649	(58,108)
Այլ ոչ գործառնական օգուտներ	2,273	56
Այլ ոչ գործառնական վնասներ	(35,958)	(3,503)
	18,964	**(61,555)**

9. Անձնակազմի գծով ծախսեր

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	151,215	102,073
Սոցիալական ապահովության վճարներ	22,180	15,398
	173,395	**117,471**

2010թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 96 մարդ (2009թ.՝ 77 մարդ):

10. Շահութահարկի գծով ծախս

Ընկերության գործունեության արդյունքում առաջացած հարկվող շահույթի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված է 5 տոկոս շահութահարկի դրույքաչափ (2009թ. – 5%):

հազար դրամ

	2010թ.	2009թ.
Շահութահարկի գծով ընթացիկ ծախս	58,573	38,327
	58,573	**38,327**

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

հազար դրամ

	2010թ.	%	2009թ.	%
Շահույթ մինչև հարկումը	1,174,467		678,181	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	58,723	5	33,909	5
Չհարկվող եկամուտների հարկային հետևանքը	(19,789)	(2)	(3,657)	(0.5)
Չնվազեցվող ծախսերի հարկային հետևանքը	19,639	2	8,075	1.2
Շահութահարկի գծով ծախսը և հարկի արդյունավետ դրույքը	58,573	5	38,327	5.7

Շահութահարկի գծով պարտավորություն

	2010թ.	2009թ.
Տարեսկզբի մնացորդ	**35,575**	**6,660**
Վճարում	(64,322)	(9,412)
Տարվա ընթացիկ ծախս	58,573	38,327
Տարեվերջի մնացորդ	**29,826**	**35,575**

11. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Հող	Շենքեր	Կառուց վածքներ	Փոխան- ցող հարմա րանքներ	Մեքենա- ներ, սարքավո րումներ,	Տրանս- պորտա- յին միջոցներ	Արտադ- բատնտե- սական գույք	Բազ- մամյա տնկար կներ	Շահա- գործման մեջ չգտնվող	Կառուցման/ տեղակայման մեջ գտնվող ՀՄ-ներ	Այլ ՀՄ- ներ	Ընդամենը
Արժեք												
Առ 1 հունվարի 2009թ.	**-**	**4,524,315**	**-**	**183,972**	**2,265,588**	**12,233**	**374,586**	**2,874**	**275,642**	**-**	**270**	**7,639,480**
Ավելացումներ	2,800	1,058	-	-	3,201	96	780	-	441,461	2,829,261	70	**3,278,727**
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-	-	(689,594)	-	-	**(689,594)**
Վերադասակարգումներ	-	(1,183,813)	4,708	(181,219)	1,740,938	12,458	(365,563)	-	(27,509)	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2009թ	**2,800**	**3,341,560**	**4,708**	**2,753**	**4,009,727**	**24,787**	**9,803**	**2,874**	**-**	**2,829,261**	**340**	**10,228,613**
Ավելացումներ	7,864	128,159	7,757	-	26,472	18,071	7,968	-	15,210	3,676,231	2,724	3,890,456
Նվազեցումներ	-	(17)	-	(82)	(2,042)	-	(2,320)	(1,388)	-	-	(25)	(5,874)
Վերադասակարգումներ	-	327,530	202,653	6,311	376,432	-	-	-	-	(912,926)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2010թ	**10,664**	**3,797,232**	**215,118**	**8,982**	**4,410,589**	**42,858**	**15,451**	**1,486**	**15,210**	**5,592,566**	**3,039**	**14,113,195**
Կուտակված մաշվածություն												
Առ 1 հունվարի 2009թ.	**-**	**1,395,460**	**-**	**51,465**	**702,287**	**1,924**	**120,380**	**384**	**-**	**-**	**5**	**2,271,905**
Մաշվածության գումար	-	41,352	124	105	50,536	3,330	1,521	575	-	-	53	**97,596**
Վերադասակարգումներ	-	(371,514)	1,165	(49,134)	530,740	5,984	(117,241)	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2009թ	**-**	**1,065,298**	**1,289**	**2,436**	**1,283,563**	**11,238**	**4,660**	**959**	**-**	**-**	**58**	**2,369,501**
Մաշվածության գումար	-	47,923	1,503	175	55,378	5,643	2,133	452	-	-	747	**113,954**
Նվազեցումներ	-	(13)	-	(65)	(1,570)	-	(1,504)	(602)	-	-	(26)	(3,780)
Առ 31 դեկտեմբերի 2010թ	**-**	**1,113,208**	**2,792**	**2,546**	**1,337,371**	**16,881**	**5,289**	**809**	**-**	**-**	**779**	**2,479,675**
Ընթացիկ արժեք												
Առ 1 հունվարի 2009թ.	**-**	**3,128,855**	**-**	**132,507**	**1,563,301**	**10,309**	**254,206**	**2,490**	**275,642**	**-**	**265**	**5,367,575**
Առ 31 դեկտեմբերի 2009թ	**2,800**	**2,276,262**	**3,419**	**317**	**2,726,164**	**13,549**	**5,143**	**1,915**	**-**	**2,829,261**	**282**	**7,859,112**
Առ 31 դեկտեմբերի 2010թ	**10,664**	**2,684,024**	**212,326**	**6,436**	**3,073,218**	**25,977**	**10,162**	**677**	**15,210**	**5,592,566**	**2,260**	**11,633,520**

ա) Հաշվետու տարվա հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

Ավելացման բնույթը	Գումար հազար դրամ
Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցում	1,584,988
Հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցում	472,512
Հիդրոտուրբինների ձեռքբերում	849,965
Որակավորվող ակտիվների վրա կապիտալացվող փոխառության %-ներ	545,221
Վարչական շենքի ձեռքբերում և կապիտալ վերանորոգում	154,992
Այլ կապիտալացումներ և ձեռքբերումներ	282,778
Ընդամենը	**3,890,456**

12. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Արտոնագրեր, լիցենզիաներ	Հաշվապահական համակարգչային ծրագիր	Այլ	Ընդամենը
Արժեք				
Առ 1 հունվարի 2009թ.	**2,000**	**255**	**18,142**	**20,397**
Ավելացումներ	2000	-	1,452	3,452
Նվազեցումներ	-	-	(16,750)	(16,750)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	**4,000**	**255**	**2,844**	**7,099**
Ավելացումներ	2,000	-	-	2000
Նվազեցումներ	-	-	(2,844)	(2,844)
Առ 31 դեկտեմբերի 2010թ.	**6,000**	**255**	**-**	**6,255**
Կուտակված ամորտիզացիա				
Առ 1 հունվարի 2009թ.	**100**	**9**	**314**	**423**
Տարվա ամորտիզացիա	218	26	387	631
Նվազեցումներ	-	-	(419)	(419)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	**318**	**35**	**282**	**635**
Տարվա ամորտիզացիա	393	116	284	793
Նվազեցումներ	-	-	(566)	(566)
Առ 31 դեկտեմբերի 2010թ.	**711**	**151**	**-**	**862**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2009թ.	**1,900**	**246**	**17,828**	**19,974**
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	**3,682**	**220**	**2,562**	**6,464**
Առ 31 դեկտեմբերի 2010թ.	**5,289**	**104**	**-**	**5,393**

13. Պաշարներ

հազար դրամ

	31.12.2010թ.	31.12.2009թ.
Նյութեր	17,576	17,435
Արագամաշ առարկաներ	6,484	1,693
	24,060	**19,128**

14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2010թ.	31.12.2009թ.
Իրացված էլեկտրաէներգիայի գծով*	214,766	369,091
ԱԱՀ-ի գծով	353,043	133,982
Հետաձգված ԱԱՀ-ի գծով	9,476	931
Այլ	138	173
	577,423	**504,177**

*Իրենից ներկայացնում է էլեկտրաէներգիայի գնորդի պարտքը (ծան. 4):

15. Դրամական միջոցներ

Հազար դրամ

	31.12.2010թ.	31.12.2009թ
Ընթացիկ հաշիվներ ՀՀ դրամով	547,741	55,879
Դրամարկղում մնացորդ	726	448
	548,467	**56,327**

16. Սեփական կապիտալի հոդվածներ

16.1. Կանոնադրական կապիտալ

	31.12.2010թ.	31.12.2009թ
Բաժնետոմսերի քանակ (հատ)	7,362,074	5,962,074
Անվանական արժեք (դրամ)	1,000	1,000
Գումար (հազար դրամ)	**7,362,074**	**5,962,074**

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 7,737,926 հատ հասարակ բաժնետոմս:
2010թ. ընթացքում Ընկերության տնօրենների խորհրդի 20.08.2010թ. որոշմամբ հայտարարվել և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի միջոցով տեղաբաշխել է 1,400,000 հատ հասարակ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 1,000 դրամ է:

31.12.2010թ. դրությամբ ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի թիվը կազմում է 1,178 (ֆիզիկական անձեր և կազմակերպություններ):

Բաժնետոմսերի բաշխումն ըստ բաժնետերերի.

	31.12.2010թ.		31.12.2009թ.	
	հատ	%	հատ	%
ԼՂՀ Կառավարություն	5,100,000	69.3	5,100,000	85.5
"Արմսվիսբանկ" ՓԲԸ	160,699	2.2	366,265	6.1
"Արմսվիսբանկ" ՓԲԸ անվանատեր	1,002,905	13.6	-	-
Սանասար Բեգլարյան	519,100	7.1	-	-
Սոֆի Սարգսյան	150,000	2.0	100,000	1.7
"Արցախի ազատամարտիկների միություն" ՀԿ	100,000	1.4	100,000	1.7
"Արցախբանկ" ԲԲԸ	80,365	1.1	-	-
Այլ (1%-ից ցածր)	249,005	3.4	295,809	5.0
Ընդամենը	**7,362,074**	**100.0**	**5,962,074**	**100.0**

16.2. Էմիսիոն եկամուտ

Ներկայացնում է բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի տարբերությունը:

	2010թ.	2009թ
Տարեսկզբի մնացորդ	**43,104**	**-**
Բաժնետոմսերի թողարկում		
Բաժնետոմսերի թողարկման գումար (ա)	*1,554,000*	*905,178*
Կանոնադրական կապիտալ (ծան. 16.1)	*(1,400,000)*	*(862,074)*
	154,000	43,104
Բաժնետոմսերի տեղաբաշխման միջնորդավճար	(17,040)	-
Նախորդ տարվա միջնորդավճարի վերադասակարգում	(21,316)	-
Տարեվերջի մնացորդ	**158,748**	**43,104**

ա) Հաշվետու տարվա թողարկման մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը կազմել է 1,110 դրամ (2009թ. տեղաբաշխման գինը՝ 1,050 դրամ):

16.3. Պահուստային կապիտալ

27.04.2010թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2009թ. զուտ շահույթի 6.82% չափով իրականացվել է մասնահանում պահուստային կապիտալին՝ ընդամենը 43,645 հազար դրամ:

16.4. Շահաբաժիններ

27.04.2010թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2009թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության բաժնետերերին վճարվել է ընդամենը 596,207 հազար դրամ շահաբաժին՝ մեկ բաժնետոմսին 100 դրամ հաշվարկով:

16.5. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	2010թ.	2009թ
Տարվա զուտ շահույթ (հազար դրամ)	1,115,894	639,854
Բաժնետոմսերի միջին կշռված քանակ (հատ)	6,034,951	5,629,054
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (դրամ)	**185**	**114**

17. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	31.12.2010թ.	31.12.2009թ.
Բանկերից	1,263,034	1,312,793
Վարկային կազմակերպություններից	1,120,752	-
Այլ կազմակերպություններից	144,063	170,000
	2,527,849	**1,482,793**
Ընթացիկ վարկեր և փոխառություններ		
Բանկերից	538,333	368,443
Այլ կազմակերպություններից	145,376	134,472
ԼՂՀ կառավարությունից	-	206,500
Ֆիզիկական անձանցից	734,149	-
	1,417,858	**709,415**

ա) Հաշվետու տարում վարկերը և փոխառությունները ստացվել են 12%-18% տարեկան տոկոսադրույքով: Միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 16%:

բ) Այլ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ստացված փոխառությունները ապահովված չեն գրավով կամ երաշխիքով:

գ) Բանկերից և վարկային կազմակերպություններից ստացված վարկերն ամբողջությամբ ապահովված են բաժնետոմսերի գրավով և ԼՂՀ Կառավարության կողմից տրված ԼՂՀ պետական բյուջեի երաշխիքներով:

Վարկերի և փոխառությունների շարժը

Փոխատու	**Մնացորդ**	**2009թ. շարժ**			**Մնացորդ**	**2010թ. շարժ**			**Մնացորդ**
	01.01.2009	ստացում	մարում	փոխարժեքից վնաս/(օգուտ)	**31.12.2009**	ստացում	մարում	փոխարժեքից վնաս/(օգուտ)	**31.12.2010**
Բանկեր	**509,179**	1,957,182	(889,622)	104,497	**1,681,236**	726,871	(529,834)	(76,906)	**1,801,367**
Վարկային կազմակերպություններ	**-**	-	-	-	**-**	1,129,817	-	(9,065)	**1,120,752**
Այլ կազմակերպություններ	**130,000**	433,492	(260,000)	980	**304,472**	90,930	(101,893)	(4,070)	**289,439**
ԼՂՀ կառավարություն	**240,500**	369,000	(403,000)	-	**206,500**	150,000	(356,500)	-	**-**
Ֆիզիկական անձիք	-	-	-	-	**-**	750,773	-	(16,624)	**734,149**
Ընդամենը մայր գումար	**879,679**	**2,759,674**	**(1,552,622)**	**105,477**	**2,192,208**	**2,848,391**	**(988,227)**	**(106,665)**	**3,945,707**
Տոկոսային ծախսեր	**-**	183,616	(183,616)	**-**	**-**	213,852	(213,852)	**-**	**-**
Ընդամենը	**879,679**	**2,943,290**	**(1,736,238)**	**105,477**	**2,192,208**	**3,062,243**	**(1,202,079)**	**(106,665)**	**3,945,707**

18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2010թ.	31.12.2009թ.
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	176,050	-
Գործառնական գնումների գծով	3,134	6,663
Աշխատավարձի գծով	-	67
Կարճաժամկետ փոխհատուցումների գծով	5,343	-
Սոցիալական ապահովության վճարների գծով	4,265	-
Հարկերի գծով, բացի շահութահարկը	3,097	2,963
Այլ պարտքեր	1,339	103
	193,228	**9,796**

19. Ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է պարտքային, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ռիսկերին:

19.1. Պարտքային ռիսկ

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը՝ ընդամենը 214,766 հազար դրամ, ներկայացնում է էլեկտրաէներգիայի միակ գնորդի պարտքը (ծան. 14): Ընկերությունը երաշխիք դեբիտորական պարտքի գծով չի պահանջում:

Ընկերությունը անհավաքագրելության պահուստ չի ձևավորում: Ընկերությունն ունի համապատասխան քաղաքականություն՝ իր ծառայությունները պատշաճ վարկային պատմություն ունեցող կազմակերպությունների մատուցելու համար:

31.12.2010թ. դրությամբ առկա առևտրային դեբիտորական պարտքի ժամկետայնությունը չի գերազանցում 90 օրը:

Հաշվետու տարում Ընկերությունը ուղղակիորեն դուրս է գրել 1,124 հազար դրամ անհուսալի դեբիտորական պարտքեր:

19.2. Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությունը ունի ստացված վարկեր և փոխառություններ՝ ֆիքսված տոկոսադրույքով: Նշված վարկերի և փոխառությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է 17-րդ ծանոթագրությունում: Ընկերությունն այդ վարկերի և փոխառությունների գծով ենթարկվում է տոկոսադրույքի իրական արժեքի ռիսկի: Ղեկավարությունը չունի ֆիքսված կամ տատանվող դրույքաչափերի հանդեպ Ընկերության հակվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն:

19.3. Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի հանդեպ Ընկերության ռիսկը կապված է ստացված վարկերի և փոխառությունների, ինչպես նաև կրեդիտորական պարտքերի հետ, որոնք ենթակա են մարման արտարժույթով: Նշված վարկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է 17-րդ ծանոթագրությունում, իսկ կրեդիտորական պարտքերի վերաբերյալ՝ 18-րդ ծանոթագրությունում: Ղեկավարությունը չի հեջավորում արտարժույթի ռիսկի հանդեպ Ընկերության հակվածությունը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության արտարժույթով մարվելիք պարտավորությունները հետևյալն են.

Արտարժույթով պարտավորություններ	ԱՄՆ դոլարով	Եվրոյով	Ընդամենը
	հազար դրամ համարժեք	հազար դրամ համարժեք	հազար դրամ համարժեք
Վարկեր և փոխառություններ	2,597,608	118,434	2,716,042
Կրեդիտորական պարտքեր	-	121,733	121,733
Ընդամենը	**2,597,608**	**240,167**	**2,837,775**

ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2010թ.	31.12.2009թ.
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը	363.44	377.89
1 Եվրոյի փոխարժեքը	481.16	542.23

Զգայունության վերլուծություն

ՀՀ դրամի փոխարժեքի 10%-ով արժեզրկումը նշված արժույթների հանդեպ 2010թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ կնվազեցնի սեփական կապիտալը 283,778 հազար դրամ գումարով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

ՀՀ դրամի փոխարժեքի 10%-ով ամրապնդումը նշված արժույթների հանդեպ 2010թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ կունենա գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն սեփական կապիտալի վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

20. Պայմանական դեպքեր

20.1. Ապահովագրություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ընկերության գույքը ապահովագրված չէ: Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2. Դատական գործեր

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան: